ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 121/1 - Ա «01» 07 2025 թ.

ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՈՒՇԱՄԵԴԱԼ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հրամայում եմ՝

«Երևանի պետական համալսարանի բարեկամներ» հիմնադրամի գործընկերների ներդրումն արժևորելու և հատուկ կերպով գնահատելու նպատակով թողարկել Զապել Եսայանի անվան հուշամեդալ՝ 50 օրինակով:

1. Զապել Եսայանի անվան հուշամեդալը՝ որպես նվիրումի և արժեքավոր համագործակցության խորհրդանիշ, շնորհվելու է «Երևանի պետական համալսարանի բարեկամներ» հիմնադրամին աջակցելու գործում բացառիկ ներդրում ունեցող անհատներին կամ կազմակերպություններին:
2. Հուշամեդալը պետք է պարունակի Զապել Եսայանի անունը և կից համապատասխան նկարագիր:
3. Հուշամեդալի թողարկման և հանձնման գործընթացն իրականացնել ԵՊՀ զարգացման և նորարարությունների գծով պրոռեկտորի վերահսկողությամբ:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ՝ **Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**